96. ԱՂՎԵՍԸ ՆԱՆ ՓԱ̈ԼԱ̈ՆԳՅԸ

Մեհետ ջանավարնեն հըվըքվեցեն, վեր ո̈ւրա̈նց հետե թաքավեր ճոկյին։ Հո̈ւր ճոկեն, հո̈ւր չի ճոկեն, ախեր թաքավերը բիդի ամենազոռավը ինի՞, տրա հետե փլա̈նգյին ճուկեցին թաքավեր։ Փա̈լա̈նգյը ո̈ւրա̈ն հետե բիդի մին հանցը յոր օնե, վեր ո̈ւրա̈ն ըսըծնեն, օղըծնեն անե։ Փա̈լա̈նգյը յոր ա օնում ըղվեսեն։

Մեհետ փա̈լա̈նգյը նան աղվեսը նստոտած սո̈հբա̈թ ին անում, թա̈ հի՞նչ անին, վեր ուտելի պեն քըթենան։

Ախրը Փա̈լա̈նգյը ըղվեսին ղարկում ա, թա̈.— Քյինա̈ շոռ եք հյվանա, պենա քթի, մես պեր օտեմ։ Աղվեսը քյինում ա, տեսնըմ մին ծո̈րում մին քանե եղենքյ ըրածըմ ըն։ Տես ա վազ տամ, տեն ա վազ տամ, տեն ա լոք տամ, տես ա լոք տամ, տեսնում ա, վեր վեչ մին պեն չի կըրլական չինի, ետ ա տեռնըմ քոռըփեշմա̈ն կյամ փըլա̈նգյեն կոշտը։

Փա̈լա̈նգյը յրա յա պըրծընում, թա̈. — Հոր ա՞ պերած պենըտ։

Աղվեսն ասըմ ա.— Թաքավերն ապրած կենա, քյեցե էլ սար, էլ ծո̈ր չըթուղեցե, լոխ շոռ եկե, ամմա վեչ մին պեն չըքըթի, հանե էն ծո̈րումը մին խիլլա̈ եղենքյ ըն ըրածում, դե հի՞նչ անիմ, զոռըս պատից վուշ, ըտրա հետե էլ կրեցե վուշ վեչ մին պեն պիրիմ։

Փա̈լա̈նգյը հո̈ւրսոտված եր ա կենըմ, թա̈.— Պա խոսած տըեղը լհա̈ կասիս օլքյա̈ս տըկտյեր կանեմ, էտ խե՞ մըհենգյ կըրեցեր վո՞ւչ, թա̈ մին մսխալ մես քըթենաս օտես, դե տու ըստեղ կաց, յըես քյինա̈մ, տըես հի՞նչ ըմ ըննական։

Փալանգը քյինամ ա ղղվեսին նշանց տրված ծորը, տրեսնում եզենքը հալա ընդեղ։ Մին եզան մաշկե վեր չանչում ա, եզանը մաշկը կոտրում ա, եզնը վեր ա ընգում, Փալանգը էն վեր ընգած եզանը շլակում ա, յոր օնում, կյամ։

Աղվեսը ասում ա.— Թաքավերն ապրած կենա, հունց յըխնեցեր էտ մեծ եզանը։

Փալանգը գյառլամիշ ա ընում, թա.— Ցրես ստրան յըխնեցե իմ չընչուլներես օժավը, իմ չնչուլնես ա վեր ինձ պահում ա, օլքումս հինչու ասես, չնչուլներավրս կրեխնեմ։

— Պա հի՞նչը կըկարե քյրեզ եխնե, հի՞նչ հեյվան, յա հի՞նչ պեն քու չնչուլներետ կրեխնե։

Փալանդն ասում ա.— Օլքումրս տի մին պեն չկա, վեր ինձ եխնե, յա մին պեն չկա, վեր յրես կարիմ վուչ իմ չընչուլներավրս ճութռոտեմ, ղիլրա-ղիլրա անեմ, օգրմ ըս ժնչիլավ կրպոտե, մին ա կըկրտրիմ, մինակ վիշավ վեր կրպոտես, բալի կարիմ վուչ, ընդրա հետե, վեր պերակ ա, չընչուլնես կրցրվրցնե։

Աղվեսը հրրցրփորց ընելավ գյուդում ա փրլանգյեն յխնելու թահրը։

Շատ ա քընենքյ անում, թա հո՞ւնց անե, վեր մրխրե վիշ քթենա։ Ախրը թահրը քթենում ա։

Աղվեսը քյինամ ա մին հրղրցում վեր ընգյնում, յանի քի ստակած ա։ Մին հրղրցավուր կյամ ա, թա քյինա, տեսնում ա աղվեսը վեր ընգյած, մտածում ա, թա. ա՛էս լրհա լավ ա, ինձ մորթե յա հարկավեր։ Ցոր ա օնում, տինում ուլախեն պեռնեն մաշ տեղը, ինքյը առաչ ա ընգնում, ուլախը հետան քցում։ Աղվեսը ուլախեն պեռնան մրխրե վիշ ա կյուղանում, լոք տամ, փախչում։

Քյնում ա, տեսնում Փալանգը դոյունշան կերած, մտակված, ինքյն էլ քըշտեն տապ ա անում, ըսկսում Փլանգին չընչուլնեն կպոտելը։ Փալանգը քնուտեղա եր ա կենում, տեսնում ուրան կպոտած, աղվեսն էլ ուրան հետե օտրմ ա-խրմում քյեփ անում։ Փալանգը տես ա զոռ անում, տեն ա զոռ անում, ամմա կարում չի ըզագվե։

Էրկու օր տի սոված վեր ընգած կենում ա, ախր մին մոկուն կյամ ա կծոտում, վիշը կտորում, Փալանգը ըզադվում ա։ Աղվեսը փախչում ա հաքյին պըցրրցնելավ, ընդեղան Փլանգին տընազ անում։

Փալանգը ծեն ա տամ, հարայ-հրրոցը քցում ընդեղեր, թա. — Ինք ըստեղ, պեն ըմ ասում, վախել մել, քյրեզ նի չըմ կյլական։

Աղվեսն ասում ա.— Ըսելինրտ հարկավեր չի, քյինա՛, ըշտեղ քու չնչուլիտ զոռան նաղլը անիս, լավ գյիգա, վեր թաքավերը մինակ ծեռքու զոռավ կարել չի յոլա քյինա, լավ ա կըլխետ զոռը ինի շատ, հինչ թա ծեռքետ։